



ՅԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

* Անջրպետին մեջ ամենէն երկար ժամանակ անցուցած մարդը ռուս Վալէրի Փոլիքովն է: Ան անջրպետի կեդրոնին մեջ մնացած է մէկ տարին անելի 437 օր:

* Չուիցերիան միակ երկիրն է, որուն դրօշակը քառակուսի է: Անկա կարմիր խորքի վրայ ճերմակ խաչ մը կը պարփակէ:

* Մեր երկրագունդը 4.5 միլիառ տարեկան է:

* 7000 տարիներէ ի վեր Եւրոպայի մէջ մարդիկ պանիր կը շինեն: Լեհաստանի մէջ գտնուած են պանիրի պատրաստութեան համար գործածուած կահապարներ:

* Աշխարհի վրայ ամենէն անելի տարածուած հիւանդութիւնը ակռայի փտութիւնն է:

* Երբ մենք ծովափէն կը դիտենք հորիզոնը, կը գտնուի մեզմէ 4 քմ. հեռու:

* Աշխարհի ամենէն մեծ կատուագին Սիպերիոյ վագրն է: Անոր դունչին ծայրէն մինչեւ պոչին ծայրը կրնայ հասնիլ մինչեւ 3.50 մետրի:

* Մազ մը ամէն ամիս մօտաւորապէս 1 սմ. կ'երկարի:

* 2007 թուականին ամերիկացի աստղանաւորդ մը իր նկարչական մեքենան անջրպետին մէջ կորսնցուցած է: Այդ թուականէն ի վեր այդ մեքենան մեր գլուխներուն վերել, տակաին շատ հեռու կը թռչի...:


* Ռեզիդիւրին եղջիրը կազմուած է քերթինէ՝ մազերուն եւ եղունգներուն նման:

ԱՌԻԾՆ ՈՒ ԱՂՈՒԷՍԸ Վարդան Այգեկցի

Առիւծ մը կորիւնի մը ծնունդ տուաւ: Կենդանիները հաւաքուեցան կորիւնը տեսելու եւ ուրախանալու: Աղուեսը եկաւ եւ բազմութեան մէջ առիւծին բարձրաձայն նախատեց ու անարգեց ըսելով թէ այդ է քու գորութիւնդ, ծնունդ կու տաս միայն մէկ կորիւնի եւ ոչ բազմաթիւ կորիւններու:

Առիւծը հանդարտօրէն պատասխանեց.

- Այո՛, ես ծնունդ կու տամ մէկ կորիւնի, բայց առիւծի ծնունդ կու տամ եւ ոչ թէ քեզի նման աղուեսի:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՆ՝ ՌԻԹԱ ԿՈՐԵՆՆ-ՏԻՔՄԻՔԵՆԱՆ
ՆԿԱՐԱՍՏՈՐՆԵՆ՝ ՌԱՅՅԻ ԲԵՐՈՇԵՆԱՆ



Ներկե՛
 նախասիրած
 գոյներովդ:



Ներկե՛
 նախասիրած
 գոյներովդ:



ԿԸ ՍԻՐԵ՛Ս ԹՈՒՎԱԸՆՈՒԹԻՒՆԸ, ՏՈՒՓԻԿԻՆ ՄԵՁ ԳՐԵ ԾԻՇԴ ԹԻԸ:

$$2+5+ \dots = 10$$

$$88/ \dots = 8$$

$$35x \dots = 105$$

$$35- \dots + 8 = 33$$

$$5x \dots = 35$$

$$37x \dots = 222$$

$$\dots \times 8 = 200$$

$$100/ \dots = 1$$

$$15-7+ \dots = 16$$

$$625/ \dots = 25$$

$$111/ \dots = 3$$

$$15x \dots = 225$$

51 - 38 - 92 - 8 - 100 - 25 - 6 - 7 - 10 - 3 - 11 - 3

մզղղողոտոտո

Ի՞նչ բռնած է մանչուկը:



Կրնա՞ս բոլոր մատիտները կարգով հանել՝ միշտ ամենն վրայինը առնելով, որպեսզի միս մատիտները չթափին:



ԽԵԼԱՅԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ



Ժամանակին թագաւոր մը կար, որ շատ կը սիրեր հանելուկներ հարցնել իր պալատականներուն: Ան յաճախ շատ տարօրինակ հարցումներ կը հարցներ, որոնց պատասխանելը շատ դժուար կ'ըլլար:

Օր մը, թագաւորը այնպիսի տարօրինակ հարցում մը կը հարցնէ, որ պալատականներէն ոչ ոք կրնայ պատասխանել: Թագաւորը մէկ առ մէկ բոլորին կը նայի, իսկ անոնք կը ծռեն իրենց գլուխները չկարենալով գտնել հանելուկին պատասխանը: Այդ միջոցին ներս կը մտնէ իր սրամտութեամբ նշանաւոր պալատական մը:

Ան գիտնալով թագաւորին սովորութիւնը կ'ըսէ. *«Կրնամ գիտնալ հանելուկը, որ փորձեմ պատասխանել»:*

Թագաւորը կ'ըսէ. *«Քանի՞ ազոաւ կայ մեր քաղաքին մէջ»:* Խելացի պալատականը անմիջապէս կը պատասխանէ. *«Յիսուն հազար չորս հարիւր ութսունվեց ազոաւ կայ, ո՛վ թագաւոր»:* Թագաւորը կը հարցնէ. *«Ինչպէ՞ս կրնաս այսքան վստահ ըլլալ»:* Պալատականը կը պատասխանէ. *«Կրնաս մարդոցդ դրկել եւ հաշուել տալ, եթէ աւելի ազոաներ գտնեն, կը նշանակէ որ կարգ մը ազոաներ այցելութեան եկած են իրենց ազգականներուն քով, իսկ եթէ նուազ ազոաներ գտնեն, կը նշանակէ, որ ազոաներէն մաս մը այցելութեան գացեր են իրենց ազգականներուն քով»:*

Թագաւորը շատ գոհ կը մնայ սրամիտ պալատականին պատասխանէն եւ կը պարգեւատրէ զայն:

Սիրելիներ՛ր, այս պատմութիւնը ցոյց կու տայ թէ սրամտութեամբ կարելի է նոյնիսկ ամենէն դժուար հարցերուն պատասխան գտնել:



ԽՈՅԱԳԻՐ

ՊԱՐԶ ՈՒ ՅԱՄԵՂ ԿԱՐԿԱՆԴԱԿ ՄԸ

Փորձա՞ծ եք կարկանդակ պատրաստել:
Եկե՛ք միասին պատրաստենք այս պարզ ու համեղ կարկանդակը:

Պետք ունիք՝

4 հավիթի, նոյն ծանրությամբ հալած կարագի (մօտաւորապէս՝ 230 կրամ), նոյն ծանրությամբ ալիւրի (մօտաւորապէս՝ 230 կրամ), նոյն ծանրությամբ շաքարի (մօտաւորապէս՝ 230 կրամ), 1.5 թէյի դգալ պէյքինկ փաուտըրի:

Պատրաստութիւն

1.- Չափահասէ մը խնդրէ՛, որ փուռը վառէ 180 աստիճանի վրայ: Հակիթները եւ շաքարը զարկ, մինչեւ որ խառնուրդը ճերմկի:

2.- Աւելցուր կարագը, ապա՝ ալիւրը եւ պէյքինկ փաուտըրը: Լաւ խառնէ եւ խմորը պարպէ փուռի յատուկ ափսէի մը մէջ, որուն վրայ կարագ քսած եւ ալիւր սրսկած ես: Կարկանդակը եփէ 40 վայրկեան:



ԾԵՐՈՒՆԻՆ ԵՒ ԸՆԿՈՒՉԵՆԻՆ

Թագաւորը իր երկրին մէջ շրջելու ատեն կը տեսնէ, որ գառամեալ ծերունի մը թարմ շիւ կը տնկէ: Կը մօտենայ անոր ու կը հարցնէ.

- Ի՞նչ կ'ընես, ո՛վ ծերունի:

- Ընկուզենիի շիւ կը տնկեմ:

- Վաղը պիտի մեռնիս, այդ ընկուզենիի շիւը ինչո՞ւ կը տնկես: Ծերունին կը պատասխանէ.

- Թագաւորը շա՛տ ապրի, մեր նախնիները տնկած են՝ մենք կերած ենք, հիմա ես կը տնկեմ, որպէսզի մեր յաջորդները ուտեն:

Առակը ցոյց կու տայ, որ պետք չէ միայն ուրիշին կատարած բարիքէն օգտուիլ, այլ մտածենք այլոց մասին:

